



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌԸ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ ԺԱՄԱՆԵՑ**

Ամենակալ Աստուծոյ պահպանութեամբ ու առաջնորդութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Լոս Անճելըս ժամանեց Չորեքշաբթի, 5 Հոկտեմբերի երեկոյեան: Անոր կ'ընկերանար գաւազանակիր Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեան:

Օդանաւի մօտէն զինք դիմաւորեցին Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, եւ Լոս Անճելըսի մօտ Լիբանանի գլխաւոր հիւպատոս Տիկ. Մատոնա Աուն Ղազալ, որոնք միացան Վեհափառը դիմաւորող անձնաւորութեանց:

Վեհափառը դիմաւորելու համար Լոս Անճելըսի միջազգային օդակայանը կը գտնուէին Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեան, Ս. Աթոռոյս աւագ միաբաններէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապաքեան, Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի նախագահ Տիար Էրիք Կարսեթի, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Տիարք Խաժակ Տիգիճեան եւ Վահէ Եագուպեան, Ազգային Վարչութեան ատենապետ Տիկ. Ռիմա Պօղոսեան եւ անդամներ, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի, հայկական կազմակերպութեանց ու միութեանց ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ ազգայիններ ու բարերարներ:

Առաջնորդ Սրբազանը յանուն Թեմին ողջոյնի խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին եւ մաղթեց, որ անոր Զալիֆորնիա հովուապետական չորրորդ այցելութիւնը ըլլայ բարեբաստիկ եւ օրհնաբեր առիթ մը բոլորին համար: Վեհափառը գոհունակութիւն յայտնեց այս այցելութեան առիթով եւ իր օրհնութեան խօսքը փոխանցեց ներկաներուն ու անոնց ճամբով՝ հայ համայնքի գաւակներուն: Բարի գալուստի խօսք արտասանեցին նաեւ Լոս Անճելըսի Քաղաքապետարանի խորհրդարանի նախագահ Տիար Էրիք Կարսեթի, Լոս Անճելըսի մօտ Լիբանանի դիւանագիտական ներկայացուցիչը՝ Տիկ. Մատոնա Աուն Ղազալ, եւ Հայաստանի գլխաւոր հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան:

Օդակայանին մէջ դիմաւորումի պաշտօնական արարողութենէն ետք, Վեհափառն ու շքախումբը ուղղուեցան Universal Hilton պանդոկը, ուր Վեհափառը կ'իջեւանէ Լոս Անճելըս իր կեցութեան ընթացքին:

Վեհափառին Քալիֆորնիա այցելութիւնը պիտի ընդգրկէ նաեւ Ֆրեզնոն, Լաս Վեկասն ու Սան Ֆրանսիսքոն:

Նշենք, որ գաղութիս հայութեան հետ Վեհափառ Հայրապետին հրապարակային առաջին հանդիպումը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 6 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 6ին, Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մէջ, Ժողովրդային դիմաւորումի հանդիսութեամբ եւ աջահամբոյրով:

## **HIS HOLINESS CATHOLICOS ARAM I ARRIVES IN LOS ANGELES**

On the afternoon of Wednesday, October 5, 2011, His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, arrived in Los Angeles. His Holiness was accompanied by staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian.

His Holiness was greeted on the tarmac by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Lebanese acting Consul General the Honorable Madonna Aoun Ghazal, and was escorted to the Special Events Lounge of the Bradley International Terminal for a welcoming reception.

Gathered at the lounge to welcome His Holiness were Prelate of the Eastern United States H.E. Archbishop Oshagan Choloyan, H.E. Archbishop Yeprem Tabakian, Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannissian, L.A. City Council President the Honorable Eric Garcetti, Central Executive members Mr. Khajag Dikijian and Mr. Vahe Yacoubian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian and members, representatives of the ARF Central Committee and sister organizations, Pontifical Visit Committee members, and sponsors.

On behalf of the guests, Archbishop Mardirossian welcomed His Holiness, stating "It is indeed a great honor to receive Your Holiness, and our community joyfully looks forward to the coming twenty days during which You will grace us with Your paternal blessings and guidance. We are confident that Your fourth Pontifical Visit to the Western United States will be among the most memorable and historic."

His Holiness conveyed his appreciation for the welcome and on the occasion of his fourth Pontifical Visit to the Western United States, and conveyed his paternal blessings to the guests.

Welcoming remarks were also delivered by L.A. City Council President Eric Garcetti, Lebanese acting Consul General Mrs. Madonna Aoun Ghazal, and Armenian Consul General Mr. Grigor Hovhannissian.

At the conclusion of the reception, His Holiness and entourage were escorted to the Universal Hilton Hotel.

The first public event will be the official welcoming of His Holiness and "Hrashapar" Service, on Thursday, October 6 at 6:00 p.m. at St. Garabed Church in Hollywood.

